ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/119

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Նակօյլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Նակօյլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ենգիբարյանի, ներկայացուցիչ՝ Է. Կարապետյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, յուղերի, քսուքների և հատուկ հեղուկների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6269-2020 գրությամբ «Նակօյլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2020թ.-ի թիվ ՊՆ/Պն/02/1347-2020 գրության հիման վրա, 28.04.2020թ.-ին «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.04.2020թ.-ին:

29.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/119 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

20.05.2020թ.-ին և 01.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.06.2020թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.04.2020թ.-ին թիվ ՊՆ/Պն/02/1347-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգին «Նակօյլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) ներկայացրած հայտում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց շտկման վերաբերյալ Մասնակիցը սահմանված կարգով ծանուցվել է: Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված շտկումները համապատասխանում են ապրանքների հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ 2-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով

ներկայացրած փարաների փարողությունների, որոնք չեն համապատասխանում այդ չափաբաժիններով հրավերով սահմանված ապրանքների փարողություններին: Ուստի 22.04.2020թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը վերոնշյալ չափաբաժինների մասով մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Նակօյլ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Նակօյլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 30.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Նակօյլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6269-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

05.05.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալ.

«Ի պատասխան Ձեր կողմից 30.04.2020թ-ին ստացված ծանուցման ցանկանում ենք տալ մեկնաբանություններ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարուցված բողոքի կապակցությամբ:

«Նակօյլ» ՍՊ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգին մասնակցելիս 2-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով փարաների փարողությունները ներակայացրել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան փարողություններով հետևյալ պատճառներով՝

- 2-րդ, 9-րդ և 14-րդ չափաբաժինների մասով հրավերով պահանջվել է արտադրող գործարանի փարողություններում՝ մինչև 20լ-անոց փարաներով ապրանքների մատակարարում: Սակայն համաշխարհային պանդեմիայի պայմաններում ստեղծված իրավիճակում արտադրող գործարանները՝ հրավերի հայտարարման և ընթացակարգին

մասնակցելու ժամանակահատվածում, աշխատում էին ոչ ամբողջ ծավալով կամ ընդհանրապես չէին աշխատում: Ինչը ստեղծում էր անորոշ իրավիճակ ստեղծված պայմաններում հրավերի պահանջներին համապատասխան տարաներով ապրանքները նշված ժամկետներում մատակարարելու հետ կապված: Ուստի ընթացակարգին մասնակցելիս առաջնորդվել ենք հնարավոր հասանելի ապրանքային մնացորդներից մեր մոտ, մատակարարների մոտ, ինչպես նաև արտադրող գործարանների ընթացիկ արտադրական հնարավորություններից: Այդ իսկ պատճառով 2-րդ և 14-րդ չափաբաժիններով առաջարկվել է ապրանքների մատակարարում 170 և 180 կգ-անոց գործարանային տակառներով համապատասխանաբար: Իսկ 9-րդ չափաբաժնով առաջարկվել է 170 և/կամ 17 կգ-անոց տարաներով ապրանքի մատակարարում, ինչը արդեն բավարում է հրավերի պայմաններին:

- 15-րդ չափաբաժնի մասով հրավերով պահանջվել է արտադրող գործարանի տարողություններում՝ մինչև 5լ-անոց տարաներով ապրանքների մատակարարում: «Նակոյլ» ՍՊԸ-ն արդեն 15 տարի զբաղվում է քսանյութերի ներմուծմամբ և վաճառքով, ունենք աշխատակիցներ, որոնք մի քանի տասնամյակ զբաղվում են քսանյութերով և երբևէ չենք հանդիպել 15-րդ չափաբաժնով պահանջվող ՏՊ-22 տուրբինային յուղը արտադրող գործարանի 5լ-անոց տարաներով: Քանի որ տուրբիններում օգտագործվող յուղի ծավալը 100-ավոր լիտրեր է, ՏՊ-22 յուղը այդքան փոքր տարաներով արտադրելը նպատակահարմար չէ:

Մեկնաբանությունները և բացատրությունները 2-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների տարաների վերաբերյալ «Նակոյլ» ՍՊ Ընկերության տնօրենի կողմից արդեն բանավոր ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 28.04.2020թ. ժամը՝ 14:30-ին ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5)՝ այլ չափաբաժինների մասով գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցությունների ժամանակ:

Հիմք ընդունելով վերընշվածը, խնդրում ենք ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՓՁ վարչությանը վերանայել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի 15-րդ չափաբաժնի մասով տարաների ծավալը, իսկ 2-րդ, 9-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ըմբռնումով մոտենալ համաշխարհային պանդեմիայի անորոշության պայմաններում առաջարկված տարաների ծավալների անհամապատասխանությանը հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով Պաշտպանության Նախարարության ռազմավարական նշանակությունը մեր երկրի անվտանգության համար՝ «Նակոյլ» ՍՊ Ընկերությունն առաջարկել է որակական ստանդարտներին համապատասխան արտադրող գործարանի տարողություններով որակյալ ապրանք՝ առաջնորդվելով տեխնիկական չափանիշների համապատասխանությունով և երկրորդական համարելով տարաների ծավալները, որոնք ցանկության դեպքում հնարավոր է մեծ տարողություններից բաշխել ավելի փոքր տարաների մեջ:»:

18.05.2020թ.-ին ներկայացված լրացմամբ մասնակիցը հայտնել է հետևյալը.

««Նակոյլ» ՍՊ Ընկերությունն ի հավելումն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարուցված բողոքի մեկնաբանությունների, որոնք ներկայացվել էին N 47 առ 05.05.2020թ. գրությամբ, ցանկանում է ևս մեկ անգամ պարզաբանել, որ անհամապատասխանությունները հրավերի պահանջներին՝ պայմանավորված են եղել համաշխարհային պանդեմիայի պայմաններում արտակարգ դրության իրավիճակով: Այդ պահի դրությամբ մեր մատակարարներից միայն մեկն է տվել գնային առաջարկ, այդ պահին առկա հնարավոր տարաներով:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 28.04.2020թ. ժամը՝ 14:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5)՝ այլ չափաբաժինների մասով գների նվազեցման նպատակով հրավիրված բանակցությունների ժամանակ, «Նակոյլ» ՍՊ Ընկերության տնօրենի կողմից բանավոր արվել է առաջարկ, որ կարող ենք ցուցաբերել տեխնիկական աջակցություն, տրամադրել պոմպեր և փոքր տարաներ՝ ապրանքների վերաբաշխման համար:»:

21.05.2020թ.-ին ներկայացված մեկ այլ լրացմամբ, Մասնակիցը հայտնել է.

««Նակոյլ» ՍՊ Ընկերությունը՝ որպես ապացույց 20.05.2020թ. ժամը 16:15, ք.Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, 1-ին հարկի N1 նիստերի դահլիճում կայացած «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- 9-ՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարուցված բողոքի քննման նիստի ժամանակ բանավոր ներկայացված փաստերի, ուղարկում է իր և արտադրող մատակարար Ագրինոլ ընկերության ներկայացուցիչների նամակագրությունը և Ագրինոլ ընկերությունից ստացված 2 կոմերցիոն առաջարկները (մեկն առանց առաջարկվող ապրանքների տարաների և մյուսն արդեն տարաներով): Ինչպես նաև ներկայացնում ենք նամակներ այլ արտադրողներից 15-րդ չափաբաժնով նախատեսված մինչև 5 լ-անոց

տարաներով տուրբինային յուղերի տարաների վերաբերյալ, որոնք հավաստում են, որ տուրբինային յուղեր այդ ծավալի տարաներով չեն արտադրվում:

Եվս մի քանի բացատրություն արտադրող ընկերության հետ նամակագրության մասով՝

- Պաշտպանության Նախարարության հրավերի պահանջներով նշվում է յուրաքանչյուր ապրանքի ԳՕՍ / ՏՊ և հավելվում «կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ»: Հիմք ընդունելով նշվածը արտադրող գործարանը անհամապատասխանության շտկման ժամանակ 9-րդ չափաբաժնով ապրանքի համար փոխել է նաև ՏՊ-ն՝ տալով հրավերի պահանջներով նախատեսված ՕՍՏ:

- Տարբեր արտադրողներ առաջնահերթությունը կարող են տալ տարբեր ցուցանիշների և միևնույն ԳՕՍ-ով կամ ՏՊ-ով արտադրվող յուղի տեխնիկական բնութագրի կամ որակի անձնագրի մեջ նշել ոչ բոլոր ցուցանիշները, այլ միայն նրանք, որոնք համարում են առավել առաջնային: Իսկ այն ցուցանիշները, որոնք նշված չեն եղել, բայց կարևոր են համարվել ՊՆ-ի հրավերի պահանջներով, արտադրողը պարտավորվել է ավելացնել մեզ մատակարարվող ապրանքների խմբաքանակների որակի անձնագրերի մեջ:

Ամփոփելով ցանկանում ենք հավաստել, որ նախկինում երբևէ չենք ունեցել նմանատիպ խնդիրներ, մասնակցել ենք բազմաթիվ մրցույթների և, հաղթող ճանաչվելու դեպքում, միշտ եղել ենք բարեխիղճ մատակարար:

Այս անգամ հատկապես փորձել ենք ստեղծված արտակարգ դրության պայմաններում անել հնարավորը՝ մեր երկրի համար հատուկ ռազմավարական նշանակություն ունեցող Պաշտպանության Նախարարությանը որակյալ արտադրանք մատակարարելու համար:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ևս մի շարք չափաբաժիններով առաջարկել ենք բոլոր չափանիշներով համապատասխան ապրանք և նվազագույն գին: Սակայն գնիջեցման ժամանակ չենք կարողացել բոլոր չափաբաժիններով այնքան իջեցնել գները, որ անցողիկ գներին բավարարեն (պատճառը՝ 2020թ-ի հունվարի 1-ից քսանյութերի ակցիզային հարկի հաշվարկի փոփոխությունն է, ինչը հանգեցրել է ցածր գին ունեցող քսանյութերի թանկացմանը, որի մասին գնիցեցման ժամանակ տեղեկացրել ենք գնահատող հանձնաժողովին): Արդյունքում հաղթող ենք ճանաչվել 2 չափաբաժիններով և արդեն կնքել ենք մատակարարման պայմանագիր:

Վստահ ենք, որ այս անգամ նույնպես բարեխիղճ կկատարենք մեր բոլոր պարտավորությունները:

Կից ներկայացնում ենք արտադրող Ագրինոլ (Ուկրաինա) ընկերության 2 կոմերցիոն առաջարկները և նամակագրությունը՝ կցված ֆայլերով, ինչպես նաև 2 նամակներ (Ռոսնեֆտ (Ռուսաստան) և Շելլ (Եվրոպա) ապրանքանիշների մատակարարներից:»:

4. <u>ՍՑ-LO-2020/119 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից յուղերի, քսուքների և հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նակօյլ» ՍՊԸ-ն:

«Նակօյլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 2-րդ, 6-րդ, 13-ից 19-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված են միայն ԳՕՍՏ-եր, սակայն բացակայում են հրավերով նախատեսված փաթեթավորման և տարաների վերաբերյալ տեղեկությունները, իսկ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 22-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված են միայն ՏՊ-ներ, սակայն բացակայում են ինչպես փաթեթավորման և տարաների վերաբերյալ տեղեկությունները, այնպես էլ հրավերով նախատեսված Մասնակցի կողմից ներկայացված ՏՊ-ների կրկնօրինակները: Ինչպես նաև 8-րդ, 9-րդ և 22-րդ չափաբաժինների մասով ներկայացված ՏՊ-ները, որոնք Հանձնաժողովի կողմից

ուսումնասիրվել են համացանցի միջոցով, չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից 10.04.2020թ.-ին ներկայացված մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով մրցույթին ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը: «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից (8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 22-րդ չափաբաժիններ) ապրանքների համար ներկայացվել են տեխնիկական բնութագրից տարբեր ՏՊ-ներ, որոնց կրկնօրինակները կցված չեն: Տվյալ ՏՊ-ների ցուցանիշները համեմատելու համար վերցվել են համացանցից: 10-րդ ե 12-րդ չափաբաժիների համացանցից վերցված ՏՊ-ների ցուցանիշները համարժեք են տեխնիկական բնութագրով ներկայացված ցացանիշներին: 8-րդ, 9-րդ և 22-րդ չաՓաբաժիների ներկայացված ՏՊ-ների (համացանցից) տեխնիկական բնութագրի ցուցանիշների համեմատության արդյունքում ի հայտ են եկել անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Չափաբաժին	Անվանումը	Ցուցանիշներ	Տեխ. բնութագրով	Ըստ հավելված 1.1-ով [1] ներկայացված ՏՊ-ի !
8	ՏՍՁպ-8	Բռնկման ջերմաստիճան, °C, ոչ ցածր	164	163
		Սառեցման ջերմաստիճան, °C, ոչ բարձր	-50	-40
		Ծծմբի զանգվածային բաժինը	ոչ պակաս 0.7%	Բացակայում է կամ չի նորմավորվում
9	ՄԳԵ-10ա	Սառեցման ջերմաստիճան, °C ոչ բարձր	-70	-40
		Թթվային թիվը	0.4-0.7 մգ KOH/գ	Բացակայում է կամ չի նորմավորվում
		Խտությունը 20°C դեպքում'	860կգ/մ^3-ից ոչ ավելի	
		Կինեմատիկ մածուցիկությունը տարբեր աստիճաններում է ներկայացված		
22	ԳՕԻ-54պ	թթվային թիվը	0.6-0.9 մգ KOH/գ	Բացակայում է կամ չի նորմավորվում
		ջրի պարունակությունը	բացակա	
		մեխ. խառնուրդների պարունակություն	ոչ ավել 0.015%	
		ամրության սահմանը 20° C-ում	200-600Պա	

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը և 10.04.2020թ.-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 13.04.2020թ.-ին ծանուցել է Մասնակցին ծանուցումը ստանալուց

հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից 21.04.2020թ.-ին ներկայացված մեկ այլ մասնագիտական եզրակացության համաձայն՝ «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից (2-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդից 19-րդ և 22-րդ չափաբաժիներ) ներկայացված տեխնիկական բնութագրերի ցուցանիշները համարժեք են հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներին, բացառությամբ որոշ չափաբաժինների տարաների ծավալների (քաշերի), որոնք ընդունելի չեն, մասնավորապես՝

Չափաբաժին	Անվանումը	Տեխ. բնութագրով	Ըստ ներկայացված հավելված 1.1-ի
2	ԱՄԳ-10	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 170կգ-անոց տարաներով
9	ՄԳԵ-10Ա	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 170 և/կամ 17կգ-անոց տարաներով
14	Կ-17	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 180կգ-անոց տարաներով
15	Տուրբինային ՏՊ-22	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 17,5 կգ-անոց տարաներով

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով 21.04.2020թ.-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, այն, որ «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ներկայացրած տարաների տարողությունները չեն համապատասխանում այդ չափաբաժիներով հրավերով սահմանված ապրաքների տարողություններին, 22.04.2020թ.-ին որոշել է Մասնակցի հայտը նշված չափաբաժինների մասով մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6269-2020 գրությամբ «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի մակնիշը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում

ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից յուղերի, քսուքների և հատուկ հեղուկների ձեռքբերման նպատակով 26.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Նակօյլ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 06.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Նակօյլ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 2-րդ, 6-րդ, 13-ից 19-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված են միայն ԳՕՍՏ-եր, սակայն բացակայում են հրավերով նախատեսված փաթեթավորման և տարաների վերաբերյալ տեղեկությունները, իսկ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 22-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված են միայն ՏՊ-ներ, սակայն բացակայում են ինչպես փաթեթավորման և տարաների վերաբերյալ տեղեկությունները, այնպես էլ հրավերով նախատեսված Մասնակցի կողմից ներկայացված ՏՊ-ների կրկնօրինակները: Ինչպես նաև 8-րդ, 9-րդ և 22-րդ չափաբաժինների մասով ներկայացված ՏՊ-ները, որոնք Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են համացանցի միջոցով, չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից 10.04.2020թ.-ին ներկայացված մասնագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության կողմից ուսումնասիրվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/20» ծածկագրով մրցույթին ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը: «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից (8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 22-րդ չափաբաժիններ) ապրանքների համար ներկայացվել են տեխնիկական բնութագրից տարբեր ՏՊ-ներ, որոնց կրկնօրինակները կցված չեն: Տվյալ

ՏՊ-ների ցուցանիշները համեմատելու համար վերցվել են համացանցից: 10-րդ ե 12-րդ չափաբաժիների համացանցից վերցված ՏՊ-ների ցուցանիշները համարժեք են տեխնիկական բնութագրով ներկայացված ցացանիշներին: 8-րդ, 9-րդ ն 22-րդ չաՓաբաժիների ներկայացված ՏՊ-ների (համացանցից) տեխնիկական բնութագրի ցուցանիշների համեմատության արդյունքում ի հայտ են եկել անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Չափաբաժին	Անվանումը	Ցուցանիշներ	Տեխ. բնութագրով	Ըստ հավելված 1.1-ով [1] ներկայացված ՏՊ-ի !
8	ՏՍԶպ-8	Բռնկման ջերմաստիճան, °C, ոչ ցածր	164	163
		Սառեցման ջերմաստիճան, °C, ոչ բարձր	-50	-40
		Ծծմբի զանգվածային բաժինը	ոչ պակաս 0.7%	Բացակայում է կամ չի նորմավորվում
9	ՄԳԵ-10ա	Սառեցման ջերմաստիճան, °C ոչ բարձր	-70	-40
		Թթվային թիվը	0.4-0.7 մգ KOH/գ	Բացակայում է կամ չի նորմավորվում
		Խտությունը 20°C դեպքում'	860կգ/մ^3-ից ոչ ավելի	
		Կինեմատիկ մածուցիկությունը տարբեր աստիճաններում է ներկայացված		
22	ԳՕԻ-54պ	թթվային թիվը	0.6-0.9 մգ KOH/գ	Բացակայում է կամ չի նորմավորվում
		ջրի պարունակությունը	բացակա	
		մեխ. խառնուրդների պարունակություն	ոչ ավել 0.015%	
		ամրության սահմանը 20° C-ում	200-600Պա	

Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը և 10.04.2020թ.-ին պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 13.04.2020թ. ծանուցել Մասնակցին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից 21.04.2020թ.-ին ներկայացված մեկ այլ մասնագիտական եզրակացության համաձայն՝ «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից (2-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդից 19-րդ և 22-րդ չափաբաժիներ) ներկայացված տեխնիկական բնութագրերի ցուցանիշները համարժեք են հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներին, բացառությամբ որոշ չափաբաժինների տարաների ծավալների (քաշերի), որոնք ընդունելի չեն, մասնավորապես՝

Չափաբաժին	Անվանումը	Տեխ. բնութագրով	Ըստ ներկայացված հավելված 1.1-ի
2	ԱՄԳ-10	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 170կգ-անոց տարաներով
9	ՄԳԵ-10Ա	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 170 և/կամ 17կգ-անոց տարաներով
14	Կ-17	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 20 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 180կգ-անոց տարաներով
15	Տուրբինային ՏՊ-22	Արտադրող գործարանի տարողությունում՝ մինչև 5 լ-ոց տարաներով	Արտադրող գործարանի տարողությունում՝ 17,5 կգ-անոց տարաներով

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով 21.04.2020թ. պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունը, այն, որ «Նակօյլ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ներկայացրած տարաների տարողությունները չեն համապատասխանում այդ չափաբաժիներով հրավերով սահմանված ապրաքների տարողություններին, 22.04.2020թ.-ին որոշել է Մասնակցի հայտը նշված չափաբաժինների մասով մերժել:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացված Ագրինոլ (Ուկրաինա), Ռոսնեֆտ (Ռուսաստան) և Շելլ (Եվրոպա) ընկերություններից ստացված նամակագրություններին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ այդ նամակագրություններով չեն ապացուցվում 2-րդ և 14-րդ չափաբաժիններով տեխնիկական բնութագրին համապատասխան մինչև 20 լ-ոց տարաներով մատակարարման անհնարինության հանգամանքը: Ընդ որում, հարկ է փաստել, որ 9-րդ չափաբաժնի մասով մասնակցի կողմից հավելված 1.1-ով՝ «170 և/կամ 17 կգ-անոց» տարաների փոխարեն «17 կգ-անոց» տարայի նշման պարագայում անհամապատասխանություն չէր արձանագրվի:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Նակօյլ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում չշտկելով թիվ 1.1 հավելվածում արձանագրված անհամապատասխանությունները՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6269-2020 գրությամբ «Նակօյլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/119 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Նակօյլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ